

Ք Ա Ղ Ա Ն Ի Ս.

Գիւղերում բոլորովին բաղանիսներ չկան, իսկ քաղաքում՝ կան մի քանիսը, որոնցից ամենալաւը եկեղեցապատկանն է: Սրանց ջուրը Հանքալին չէ. այլ տաքացնում են:

Գիւղերում լողանում են ձմեռը՝ տանը, իսկ ամառը՝ բաւկում, կապերտներով և սաւաններով մի անկիւն առանձնացնելով:

Սովորաբար կանայք լողանում են ամէն շաբաթ օր և կամ գլխներն ու ոտներն են լուանում, իսկ տղամարդիկ և պառաւանները տարին միայն մի քանի անգամ, մէկ մէկ էլ գլուխներն և ոտները լուանալ տալիս: Թէ՛ լողանալիս և թէ՛ լուացուելիս առաւելապէս գործ են ածում ճարպի (փիի) սապոն, իսկ աղքատները՝ չողան (salicornia). սակայն այս չողանը աւելի գործ են ածում լուացքի մէջ:

Լողանալիս սպիտակեղէնները փոխում են և Հանածը անմիջապէս լուանում:

Առհասարակ երեխաներին լողացնում են մայրերը և տատերը, Հարսերին՝ աղջիկները և կրտսեր Հարսերը աւագութեան կարգով, այսպէս՝ առաջին Հարսին լողացնում է երկրորդ Հարսը, երկրորդին՝ երրորդը և այլն, իսկ նորահարսին՝ տան աղջիկը: Սկեսուրին լողացնում են Հարսերը, իսկ սկեսուրը երբէք չի լողացնում Հարսին, ամօթ Համարելով այդ:

Լողացնողը իսկոյն լողացողի շորերն էլ լուանում է նրա լողացած ջրի մէջ և ապա ինքը լողանում, կանչելով իրեն լողացնողին:

Կանայք լողանալիս նախ մի մեծ կաթսայով ջուր են տաքացնում, ապա տաշտը և սրա մօտ մի երկրորդ կաթսայ դնում, առաջին կաթսայից ջուրը վերցնում, լցնում երկրորդ կաթսան, սառն ջուր աւելացնում, այնպէս որ բարեխառն լինի, ապա գլուխը քանդում, երեսին խաչ Հանում, «Յիսուս Քրիստոս Աստուած, դու չար աչքէ թափես» ասում և սկսում գլուխը լուալ: Մի քանի անգամ սապնելուց յետոյ գլխին քսում են կամ քացախ, մէջը մի քիչ իւղ Հարած, կամ մածուն, և

կամ ձուի լաւ հարած դեղնուց: Յետոյ հանում են հանդերձները, նստում տաշտի մէջ և լողանում: Լողացնողը ջուր է ածում, սապոնում, լֆում, և օգնում հագնուելու:

Քաղաքում ստորին և աղքատ դասակարգը նոյնպէս տանն է լողանում, իսկ փոքր ինչ հարուստները հրկու շաբաթը մի անդամ կամ աւելի ուշ գնում են բաղանիս: Փանձակում, ինչպէս և ուրիշ գաւառական քաղաքներում, բաղանիսը կանանց կլուր կարելի է համարել: Այստեղ հաւաքում է կանանց ահագին բազմութիւն և միւսնայն, ընդհանուր բաժնում լողանում 4—5 ժամ շարունակ: Այս միջոցում միմեանց տեսնում են, միմեանց կողք նստում, երկար խօսակցում, նորութիւնները միմեանց հաղորդում, սրան նրան բամբասում: Բայց բաղանիսը մի ուրիշ դեր էլ է կատարում. մեծ մասամբ այստեղ են ընտրւում հարսնացուները. երիտասարդների մայրերը շուտ շուտ գնում են բաղանիս, դիտում, քննում այս և այն աղջկան, որ տեսնին, թէ մարմնական մի որևէ պակասութիւն չունին: Բաղանիսում ծառայող լողացնող կանայքը առաջինն են, որոնց դիմում են երիտասարդների մայրերը տեղեկութիւններ առնելու աղջիկները, կազմուածքի և բնաւորութեան մասին:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ե Ւ Խ Մ Ի 2 Գ.

Այս գաւառի հայ գիւղացիների սնունդը կազմում են գլխաւորապէս բուսեղէնն ու կաթնեղէնը. մսեղէնը շատ փոքր մասն է բռնում. Բացի միւսքանի մեծ և կենդրոնական գիւղերից, ո՛ր մի գիւղում չատուկ մսավաճառ չկայ, և չատկապէս ծախելու համար կենդանիներ չեն մորթում: Երբեմն միայն, երբ միևի եղբ կամ ոչխարը վնասւում և կամ մի որևէ հիւանդութիւն ստանալով՝ անպէտքանում կամ սատկելու վտանգին է ենթարկւում, գիւղացին մորմուքած սրտով մորթում է և մի ծառի ճիւղից քաշ տալով՝ ձայն տալիս գիւղին, որ դան միս առնեն: Այս ժամանակ ամբողջ գիւղը ցնծում է և մի տեսակ կենդանութիւն, շարժում ստանում: Ամէն կողմից խմբւում են մսավաճառի շուրջը և հերթի չսպասելով՝ ահագին աղմուկ բարձրացնում: Թռչուններ, ինչպէս հաւ, բադ, հնդկահաւ, թէև պահում են, և այն էլ բաւական մեծ քանակութեամբ, բայց հազիւ է պատահում,